

Ապրիլ 8, 1958.

Արժանաշնորհ  
Տ. Վրթանէս Աւագ ԲՀՆյ. Փափագեան,  
Հողեւոր Հովիւ եւ Նախագահ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պատուարժան Միակեան Խորհուրդի,  
Եիջակօ - Իլ.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք ամսոյս 7 թուակիր ձեր նամակը, որուն կցուած էր նաեւ ձեր Միակեան Տեղեկագիրը, որով կը տեղեկացնէիք թէ ձեր նախագահութեան տակ գումարուած Միակեան Ժողովին մէջ ընտրած էք Միակեան Խորհուրդի անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացումը:

Նկատի ունենալով որ ներքոյիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ եկեղեցւոյդ պարտաճանաչ անդամներ կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ հետեւեալին.-

Պրնց. Տիրան Մամեան  
Նշան Բէշեան  
Վարդան Միքայէլեան  
Կարապետ Գալգանեան

Այսու կարտօնենք ձեզ մասնաւոր ժողովի հրաւիրել Միակեան Խորհուրդիդ նոր կազմը, եւ կատարել Դիւանի եւ մասնաւոր պաշտօններու ընտրութիւնը, եւ հաղորդել ձեզ անոր արդիւնքը, միաժամանակ տալով իւրաքանչիւրի հասցէն եւ հեռաձայնիթիւրը:

Կը մաղթենք ձեզ եւ Պատուարժան Միակեան Խորհուրդիդ բոլոր անդամներուն համախոհ եւ բեղմնաւոր գործունէութիւն յօգուտ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան, եւ կաղօթենք ամէնքիդ առողջութեան եւ բարբօրութեան համար:

Հայրական Սիրոյ Ողջունիւ,

Աղօթարար՝

ՄԱՄԱՐԻ ԱՐՁԵՊՍ. ԳԱԼՏԱՅԵԱՆ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի